# ԵԿԵՔ ՖԻԶԻԿԱՊԵՍ ԱԿՏԻՎ ԼԻՆԵՆՔ

**Հավասարակշռել ձեր անձնական կյանքը - Մաս 3**

*«Սիրելի՛ս, աղոթում եմ քո բոլոր հաջողությունների և քո առողջության համար, ինչպես քո հոգին է հաջողության մեջ:»* Գ Հովհաննես 2

*«…փառավորե՛ք Աստծուն ձեր մարմնի մեջ:»* Ա Կորնթացիս 6:20

## Ինչպես ֆիզիկապես լավ զգալ

### Ա. Քո մարմնի նկատմամբ առողջ վերաբերմունք զարգացրու

## Անառողջ վերաբերմունքներ

- Մերժել մարմինը
- Կատարելագործել մարմինը
- Անտեսել մարմինը

Առողջ վերաբերմունքներ: Հարգիր այն եվ պահպանիր այն.

### Բ. Խրախուսիր ինքդ քո փոփոխության համար

Ինչու պետք է ավելի լավ հոգամ իմ մարմնի մասին

## Ֆիզիկական պատճառներ:

- Ես ինձ ավելի լավ կզգամ
- Ես ավելի լավ տեսք կունենամ
- Ես ավելի երկար կապրեմ

## Հոգեվոր պատճառները:

**1. Աստված է ստեղծել իմ մարմինը:** Սաղմոս 139:13-16

**2. Հիսուսը վճարել է իմ մարմնի համար:** Ա Կորնթացիս 6:19-20

**3. Սուրբ հոգին ապրում է իմ մարմնի մեջ:** Ա Կորնթացիս 3:16

## Գ. Հետեվիր Աստծո առողջության օրենքներին

*«Որդյա՛կ իմ, ուշադի՛ր եղիր իմ խոսքերին …Որովհետև նրանք … բժշկություն են նրանց ամբողջ մարմնին:»* Առակաց 4:20-22

**1. Պահպանիր քո իդեալական քաշը**

*«Ձեզանից յուրաքանչյուրը պետք է սովորի իր մարմինը սրբորեն և պատվավոր կերպով կառավարել:»* Ա Թեսաղոնիկեցիս 4:4

**2. Հավասարակշռիր քո սննդակարգը**

*«Ինձ համար ամեն բան թույլատրելի է, բայց ամեն բան օգտակար չէ… Ուտելիքները որովայնի համար են, և որովայնը՝ ուտելիքների, բայց Աստված այդ էլ, դրանք էլ կխափանի:»* Ա Կորնթացիս 6:12-13

**3. Հետեվիր կանոնավոր մարզումների ծրագրին**

*«Որովհետև մարմնամարզությունը քիչ բանի համար է օգտակար…»* Ա Տիմոթեոս 4:8

*«Իմ մարմինը ճնշման եմ ենթարկում և հնազանդեցնում…» (Պողոս)* Ա Կորնթացիս 9:27

- **Տարածված արդարացում: «Ժամանակ չունեմ»**
- **Տարածված սխալը: Սկզբում չափազանցնել**

**4. Բավարար քնիր եվ հանգստացիր**

*«Զուր է ձեզ համար կանուխ վեր կենալը, ուշ հանգստանալը.»* Սաղմոս 127:2

*«Դուք առանձին մի ամայի տե՛ղ եկեք ու մի քիչ հանգստացե՛ք»:* Մարկոս 6:30-32

**5. Խուսափիր ալկոհոլի օգտագործումից**

*«Գինով մի՛ հարբեք, որ անառակության է տանում, այլ Հոգո՛վ լցվեք:»* Եփեսացիս 5:18 *(*Առակ 23:29-35, Հռով 14:21, Ղուկաս 1:15, Առակ 21:1)

**6. Ապրիր Աստծո հետ ներդաշնակության մեջ**

*«Հանդարտ սիրտը բժշկություն է մարմնի համար»* Առակաց 14:30

*«…ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը:»* Հռովմայեցիս 12:1

Հաջորդ Քարոզի Թեման:

**Վարժություններ հոգեվոր աճի համար**

**Յովիվ Սարօ Խաչիկեան**